երեւում էր, լուսարարի անհոգութիւնից ընկած է եղել եւ այրել է աստուածամօր գրկում մանուկ Յիսուսի ոտները, մի այլ տեղում կտաւը պատռած էր:

Հայրիկը ցոյց տուեց մեզ մի այլ հնութիւն, որը, որպէս ասում էր նա, Արծրունեաց իշխանուհի օրիորդներից մէկի ձեռագործն էր, որ նուիրուած էր Վարագայ վանքին: Սեղանի ծածկոց էր այդ գեղեցիկ աշխատութիւնը, որի վրայ օրիորդի ճարտար մատները ստեղծագործել էին զանազան պատկերներ ս. Գրիգոր Լուսաւորիչի չարչարանքներից:

— Շատ անգամ մեր վանքերում կամ եկեղեցիներում պատահում են այնպիսի անօթներ, զգեստներ կամ այլ իրեղէններ, որոնք մաշուած, հնացած եւ գործածութիւնից ընկած լինելով, այնպէս, իբրեւ մի անպէտք բան, ձգած են լինում եկեղեցիների խորաններում կամ պահարաններում, եւ այնտեղ փտում են: Երբեմն նրանց մէջ գտնւում են այնպիսի հազուագիւտ իրեղէններ, որոնք, իբրեւ հնութիւն արհեստի համար մեծ նշանակութիւն ունեն, — ասաց Հայրիկը, — մենք հոգ ենք տանում հաւաքելու այդպիսինները: — Եւ նա ցոյց տուեց մեզ զանազան սաղաւարտներ, վակասներ, շուրջառներ, եպիսկոպոսական կամ վարդապետական գաւազաններ, հնամաշ գորգերի կտորներ, կաթողիկոսական հողաթափներ եւ այլ իրեղէններ, որոնք ամենահին ժամանակներում բերուել էին Հնդկաստանից, Չինաստանից, Սպահանից կամ այլ հեռաւոր երկրներից, որտեղ եղել են հայոց վաճառականներ:

Յետոյ Հայրիկը ցոյց տուեց իր դպրոցը, որ գտնւում էր վանքի շինուածքների մի առանձին բաժնում: Ես մինչեւ այսօր տեսած էի երկու դպրոցներ միայն, մէկը տէր Թոդիկի դպրոցը, այն սարսափելի դժոխքը, որի աշակերտը լինելու դժբախտութիւնն էի ունեցել, միւսը՝ Սիմոն պատուելիի դպրոցը, որ տեսայ Վանայ մէջ, եւ որը իր կազմակերպութեամբ շատ չէր զանազանւում առաջինից: Այդ երկու հիմնարկութիւններից մէկը Պարսկաստանի, միւսը Տաճկաստանի հայոց մանկավարժութեան կատարելատիպն էր, եւ գրեթէ երկուսն էլ սահմանուած էին մանուկներին բթացնելու եւ թէ՛ բարոյապէս, թէ՛ մտաւորապէս սպանելու համար: Այդ դպրոցներից յետոյ, Հայրիկի դպրոցը, տարակոյս չկայ, որ աշխարհի եօթն հրաշալիքներից մէկն էր երեւում ինձ: Եւ իրաւ, նա իր տեսակի մէջ առաջին օրինակն էր այդ երկրում, եւ գուցէ այդ էր պատճառը, որ իբրեւ նորութիւն ենթարկուել էր այնքան հալածանքների: Ես, ի հարկէ, չէի կարող քննել նրա ներքին, ուսումնական կազմակերպութիւնը, նրա ծրագիրը, ինձ գրաւում էր նրա արտաքինը միայն: Այստեղ առաջին անգամ տեսայ, որ աշակերտները դասաւորուած էին կարգով նստարանների վրայ եւ ոչ թէ, որպէս տէր Թոդիկի դպրոցում, խառնիխուռն նստած էին յատակի վրայ, իրանց տակին փռած ունենալով մի կտոր հասիր կամ այծի մոր-